Պայմանագիր No 02
Սուբսիդիա տրամադրելու մասին

ք. Երևան «22» «հունվարի» 2016թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ «Աշխատակազմ»)՝ ի դեմս Աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և «Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ «Կենտրոն»)՝ ի դեմս տնօրեն Տիգրան Աբրահամյանի, որը գործում է Կենտրոնի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշումով հաստատված կարգի համաձայն կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով «Հայաստանի Հանրապետության 2016թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի 08 բաժնի, 03 խմբի, 01 դասի, 07 «Տնտեսական վերլուծությունների ծառայություններ» ծրագրով Աշխատակազմին նախատեսված 191 511 000 (հարյուր իննսունմեկ միլիոն հինգ հարյուր տասնմեկ հազար) ՀՀ դրամի սուբսիդիա է տրամադրվում Կենտրոնին, որի շրջանակներում «Կենտրոնը» կատարում է տնտեսական վերլուծություններ ու ուսումնասիրություններ, ՀՀ կառավարության գործունեությունը լուսաբանող «Հրապարակում» հեռուստածրագրի պատրաստում, պաշտոնական միջոցառումների նկարահանումներ ու արխիվացում, ԶԼՄ մոնիտորինգ, հասարակություն-կառավարություն կապի ապահովում ԶԼՄ-ների և սոց.ցանցերի հրապարակումներով:

2. Կողմերի պարտականությունները և իրավունքները

2.1. «Կենտրոն»-ը պարտավոր է .

2.1.1. ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականության լուսաբանում Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդաշարերի միջոցով:

Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունը պարբերաբար, բազմակողմանի և օբյեկտիվ լուսաբանելու նպատակով Հանրային հեռուստատեսության եթերում «Հրապարակում» հեռուստահաղորդաշարի պատրաստում և հեռարձակում:

ՀՀ վարչապետի այցերի և հանդիպումների, ՀՀ կառավարությունում տեղի ունեցող միջոցառումների նկարահանում, տեսագրված նյութերի արխիվացում, անհրաժեշտության դեպքում օպերատիվ տեսագրված նյութերի տրամադրում հեռուստաընկերություններին:

Տարվա ընթացքում 58 հաղորդում, մեկ հաղորդման միջինացված գինը՝ 773 000 ՀՀ դրամ

Ընդամենը՝ 44 834 000 ՀՀ դրամ:

2.1.2. Հեռուստահաղորդումների, էլ.կայքերի, հանրապետական թերթերի, սոցիալական ցանցերի շուրջօրյա մշտադիտարկում, տեղեկատվության մշակում, ամփոփում համառոտ տեղեկանքներում:
Կառավարություն-հասարակություն կապի ամրապնդման նպատակով հեռուստահաղորդումների, էլ.կայքերի, հանրապետական թերթերի մշտադիտարկում, տեղեկատվության մշակում, ամփոփում համառոտ տեղեկանքներում և ռիսկերի կառավարում: Օտարալեզու լրատվամիջոցների մշտադիտարկում և համապատասխան տեղեկանքների պատրաստում: Աշխատանքային օգտագործման տեղեկանքների տրամադրում ՀՀ վարչապետին և ՀՀ կառավարության աշխատակազմին:
Տարվա 12 ամիսների ընթացքում, 2 300 հրապարակում, մեկ նյութի միջինացված գինը՝ 17 140 ՀՀ դրամ: Ընդամենը՝ 39 422 000 ՀՀ դրամ:

2.1.3. ՀՀ կառավարության գործունեությանը վերաբերող վերլուծությունների իրականացում, կառավարության գործունեության լուսաբանում էլեկտրոնային և տպագիր զանգվածային լրատվամիջոցների, ինչպես նաև սոցիալական կայքերի միջոցով: ՀՀ կառավարության գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով վերլուծությունների, իսկ աշխատանքային օգտագործման համար նաև մասնագիտական վերլուծությունների կատարում, դրանց հիման վրա տեղեկատվական, ինչպես նաև վերլուծական հոդվածների և հրապարակումների պատրաստում: ՀՀ կառավարության գործունեության լուսաբանում էլեկտրոնային և տպագիր ԶԼՄ-ներում հոդվածներ, տեղեկատվական նյութեր հրապարակելու, իսկ սոցիալական ցանցերում՝ տեղեկատվական և վերլուծական բնույթ կրող գրառումներ կատարելու միջոցով:
Տարվա 12 ամիսների ընթացքում՝ 5 480 վերլուծական նյութ մեկ միավորի միջինացված գինը կազմում է 15 100 ՀՀ դրամ: Ընդամենը 82 748 000 ՀՀ դրամ:

2.1.4. ՀՀ կառավարության գործունեության լուսաբանում հանրապետական և մարզային ԶԼՄ-ներում:
Մարզերում ՀՀ կառավարության գործունեությունը և կառավարության կողմից իրականացված ծրագրերը հանրությանը ներկայացնելու նպատակով իրազեկման բնույթ կրող հեռուստառեպորտաժների պատրաստում և հեռարձակում մարզային հեռուստաալիքների եթերում: Մեկ տարվա ընթացքում՝ 560 հաղորդում, մեկ միավորի միջինացված գինը՝ 43 762,5 ՀՀ դրամ: Ընդամենը՝ 24 507 000 ՀՀ դրամ:

2.1.5. Ներկայացնել «Աշխատակազմ» սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող «Կենտրոն»-ի 2016թ. ծախսերի նախահաշիվը (կցվում է):

2.1.6. Ներկայացնել «Աշխատակազմ» եռամսյակային հաշվետվություններ ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն, ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի թիվ 104-Ն և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի մարտի 28-ի թիվ 324-Ն հրամաններով հաստատված օրինակելի ձևերին համապատասխան, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 12 օրյա ժամկետում:

2.2. «Կենտրոն» - ը իրավունք ունի.

2.2.1. Սույն պայմանագրի 3-րդ կետում նշված ժամկետում և կարգով «Աշխատակազմ»-ից ստանալու ՀՀ պետ.բյուջեից հատկացվող գումարը:

2.3. «Աշխատակազմ» - ը պարտավոր է.

2.3.1.Պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների կատարման ընթացքում անհրաժեշտ աջակցություն և օժանդակություն ցուցաբերել «Կենտրոն»-ին:

2.4. «Աշխատակազմ» - ը իրավունք ունի.

2.4.1. Պահանջել «Կենտրոն»-ից սույն պայմանագրի 2.1.5 ենթակետում նշված ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

2.4.2. Ցանկացած ժամանակ լուծել կամ փոփոխել սույն պայմանագիրը՝ այդ մասին 15 օր առաջ գրավոր ծանուցելով Կենտրոնին, եթե պարզվի, որ վերջինս չի կատարում սույն պայմանագրի որևէ պայման:

3. Վճարումների կարգը

3.1 2016 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվող պետական աջակցության առավելագույն չափը կազմում է 191 511 000 (հարյուր իննսունմեկ միլիոն հինգ հարյուր տասնմեկ հազար) ՀՀ դրամ:

3.2 «Աշխատակազմ»-ը 3.1 կետում նշված գումարը «Հայաստանի Հանրապետության 2016թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն փոխանցում է Կենտրոնի հաշվին համամասնորեն՝ ամսական կտրվածքով, ոչ ուշ քան տվյալ ամսվա 10-ը, բացառությամբ հունվար ամսվա սահմանված գումարը, որը կփոխանցվի մինչև 2016 թ. հունվարի 25-ը:

4.Կողմերի պատասխանատվությունը

4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմանների չկատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենքով սահմանված կարգով:

5. Այլ պայմաններ

5.1 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից:

5.2 Սույն պայմանագիրը իրավաբանական ուժ է ստանում կնքման պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկ օրինակ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ	«Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական շենք 1	ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական շենք 1, 4-րդ մասնաշենք
ՀՀ ՖՆ գանձարանական վարչություն	Կոնվերսբանկ 19300 00438960100
Հ/Հ 90000 11022226	ՀՎՀՀ 00833792
ՀՎՀՀ 02505554	
ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար	Տնօրեն
Դ.Հարությունյան	Տ.Աբրահամյան